ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02.04.2016թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2016-2017 ուստարվա ԵՊՀ ԻՄ բակալավրիատի ուսման վարձավճարների չափերի քննարկում:
   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
2. 2016-2017 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում:
   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
3. 2016-2017 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության մասին:
   /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2014-15 ուստարվա գործունեության մասին:
   /Զեկուցող Ա. Մ. Զուրաբյան/
5. Ընթացիկ հարցեր:

I. ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի ասիստենտ Ա. Մարդանյանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Զ. Առաքելյանի ‹‹Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա›› մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորության հարցը:

II. ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մ. Զաքարյանի ‹‹Կոմպլեքս անալիզի խնդրագիրք›› ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորության հարցը:

III. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատումը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Մինչև օրակարգի հարցերին անցնելը տնօրեն Ս. Ա. Առաքելյանը շնորհավորեց հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանին Տավուշի մարզի փոխմարզպետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ և հավելեց, որ նա շարունակելու է պրոֆեսորադասախոսական աշխատանքը ԵՊՀ ԻՄ-ում: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը շնորհակալություն հայտնեց Ռազմիկ Հովսեփյանին ուսանողական խորհրդի նախագահի պաշտոնում արդյունավետ աշխատելու համար և շնորհավորեց ԵՊՀ ԻՄ-ի նորընտիր ուսանողական խորհրդի նախագահին՝ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Իսկուհի Շաղբաթյանին, մաղթելով նրան բեղմնավոր գործունեություն:

Օրակարգի առաջին՝ 2016-2017 ուստարվա ԵՊՀ ԻՄ բակալավրիատի ուսման վարձավճարների չափերի քննարկում հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը տեղեկացրեց, որ ԵՊՀ –ն բոլոր մասնագիտություններով վարձավճարները բարձրացրել է 8 տոկոսով: Սակայն, հաշվի առնելով ԵՊՀ ԻՄ-ի պոտենցիալ դիմորդների սոցիալական վիճակը տնօրեն Ս. Առաքելյանը առաջարկեց վարձավճարների չափը չբարձրացնել /հավելված 1/: Նա նշեց, որ մեր ուսանողների մոտ 20 տոկոսը սահմանամերձ գոտուց են, որը մեծ ֆինանսական բեռ է մասնաճյուղի համար: Անհրաժեշ է որ մասնաճյուղը ֆինանսական խնդիրները փորձի կարգավորել այլ աղբյուրներից, այսինքն ոչ դիմորդների հաշվին: Պետք է աշխատենք պետության կողմից պետպատվերի ավելացման ուղղությամբ, որի համար անհրաժեշտ է մշակել լուրջ առաջարկ և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարին: Պետք է փորձենք գտնել նաև արտաքին դոնորներ, որնք ցանկություն ունեն թեթևացնել սահմանամերձ համայքներից մեր ուսանողների ֆինանսական բեռը:

Արտահայտվեցին –ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը և ֆակուլտետների դեկանները:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին տնօրենի առաջարկին՝ վարձավճարները սահմանել համաձայն հավելված 1-ի և փնտրել այլ ֆինանսավորման աղբյուրներ:

Որոշեցին

Որոշում 15/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 10-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի ուսման վարձավճարների չափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ցանկը ուղարկել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի երկրորդ՝ 2016-2017 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա տեղեկացրեց, որ մայր բուհը կրճատել է հեռակայի մասնագիտությունների քանակը ի հաշիվ այն մասնագիտությունների, որտեղ ուսանողների քանակը քիչ է եղել 15-ից, և հավելեց, որ մասնաճյուղում նույնպես կա որոշ մասնագիտություններով դիմորդների սակավություն: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ մասնագիտությունների ընտրության հարցը շատ նուրբ և լուրջ խնդիր է և կատարվել է լուրջ ուսումնասիրություններ, ինչպես նաև հաշվի է առնվել շրջանավարտների, արտաքին շահեկիցների և ուսանողության շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումները, որոնք հիմք ընդունելով ներկայացնում ենք հետևյալ ցանկը (հավելված 2): Մասնավորապես նշվեց, որ հեռակա ուսուցմամբ չի նախատեսվում իրականացնել ընդհունելություն նաև սերվիս մասնագիտությամբ:

Արտահայտվեցին – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը:

Ն. Խուդավերդյանը և Գ. Հովհաննիսյանը կարևորեցին սերվիս մասնագիտության դերը մեր բուհի համար և առաջարկեցին այն ավելացնել հեռակա ուսուցմամբ ընդունելության մասնագիտությունների ցանկում, կամ ինչ-որ ձևով կազմակերպել վճարովի դասընթացներ, այն մարդկանց համար

ովքեր ցանկություն կհայտնեն ստանալ երկրորդ մասնագիտություն սերվիս մասնագիտացմամբ:

Ի պատասխան այս առաջարկի Մ. Զուրաբյանը նշեց, որ այդ մասնագիտությամբ դիմորդների քանակը վերջին երեք տարիներին նվազել է, բացի այդ նշված մասնագիտությամբ առկա ուսուցմամաբ նախատեսվում է կատարել ընդունելություն, որը կապահովվի այդ մասնագիտությաբ աշխատատեղերի պահանջարկը:

Որոշեցին

Որոշում 15/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 10-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման բակալավրիատի 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելված 2:
2. Ցանկը ուղարկել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի երրորդ՝ 2016-2017 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ այս տարի ԵՊՀ մագիստրատուրայում նախատեսվում է մասնաճյուղի ուսանողներին հատկացնել 11 (տասմեկ) անվճար տեղ, բացի այդ ամենուր նվազել է վճարովի մագիստրատուրա սովորողների թիվը, որի մեջ բավականին լուրջ դեր է

խաղում սոցիալական խնդիրը: Մյուս կողմից պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ բակալավրիատը հանդիսանում է լիարժեք բարձրագույն կրթություն, և որ մագիստրատուրա պետք է սովորեն միայն այն մարդիկ որոնք ցանկանում են հետագայում զբաղվել գիտությամբ: Այսպիսով ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տարի մագիտրատուրա դիմորդների քանակը մասնաճյուղ շատ քիչ է բավարար լինելուց, և կարող լրացուցիչ ֆինանսական բեռ դառնալ ԵՊՀ ԻՄ-ի համար:

Արտահայտվեցին – Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Ա. Ներսիսյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Վանուհի Վանեսյանը: Մասնավորապես Ա. Ներսիսյանը նշեց, որ մագիստրատուրա պետք է դիմեն միայն գիտահետազոտական գործունեությամբ զբաղվողները, որք մեծ թիվ չեն կազմում: Վ. Վանեսյան նույպես համաձայնեց բանախոսների հետ և կարևորեց մագիստրատուրան ԵՊՀ –ում սովորելու հանգամանքը:

Որոշեցին

Որոշում 15/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ –ում 2016-2017 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն չկազմակերպել:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի չորրորդ՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2014-15 ուստարվա գործունեության մասին լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Ա. Մ. Զուրաբյանի հաղորդումը (Հավելված 3):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ -ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը: Նա նշեց, որ ամենակարևորը ՈՒԳԸ-ի կատարված գործերի արդյունավետությունն է, անհրաժեշտ է, որ այդ կառույցը ավելի ակտիվանա, պետք է ակտիվացնել ուսանողների մասնակցությունը տարբեր մրցույթների և գիտական միջոցառումներին: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը կարևոր նաև , որ ճիշտ կլինի, որ ՈՒԳԸ հստակեցնի ուսանողների հասարակական ակտիվությունը գնահատող գործիքները:

Որոշեցին

Որոշում 15/4

Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի ասիստենտ Ա. Մարդանյանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Զ. Առաքելյանի «Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա» մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորության հարցի մասին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնը 26.02.2016թ. կայացած թիվ 10 նիստում որոշում է կայացրել դիմել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի ասիստենտ Ա. Մարդանյանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության

ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Զ. Առաքելյանի ‹‹Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա›› մեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար: Այս ձեռնարկը կարող է օգտակար լինել ֆրանսերենի մասնագիտական բաժինների ուսանողներին, ինչպես նաև հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար: Ներկայացված ձեռնարկը գրախոսվել է օտար լեզուների ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Ռ. Վ. Միրզոյանի կողմից և արժանացել է օտար լեզուների ամբիոնի դասախոսների բարձր գնահատականին:

Արտահայտվեցին – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան բ.գ.թ. դոցենտ Վ. Ալեքսանյանը, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ ման. գիտ. թեկ. դոցենտ Վ. Ա. Բրուտյանը:

Նրանք կարևորեցին ‹‹Ֆրանսերեն լեզու և գրականություն›› մասնագիտությամբ ուսանողների և դասախոսների համար մեթոդական մասնագիտական գրականությամբ համալրելու փաստը, որը նաև համապատասխանում է ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնում գործող համապատասխան առարկայական ծրագրերին:

Որոշեցին

Որոշում 15/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի ասիստենտ Ա. Մարդանյանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Զ. Առաքելյանի ‹‹Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա›› մեթոդական ձեռնարկը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մ. Զաքարյանի ‹‹Կոմպլեքս անալիզի խնդրագիրք›› ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորության հարցի մասին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնը 18.03.2016թ. կայացած թիվ 10 նիստում որոշում է կայացրել դիմել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մ. Զաքարյանի ‹‹Կոմպլեքս անալիզի խնդրագիրք›› ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար: Ներկայացված ձեռնարկը գրախոսվել է ԵՊՀ դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի պրոֆեսոր ֆ.մ.գ.դ. Մարտին Կարախանյանի կողմից և արժանացել է բարձր գնահատականի:

Արտահայտվեցին – Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ֆ.մ.գ.թ. Ա. Ցուցուլյանը: Նա նշեց, որ ‹‹Կոմպլեքս անալիզի խնդրագիրք›› ուսումնական ձեռնարկը պարունակում է խնդիրներ և առաջադրանքներ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի տեսությունից: Աշխատանքը համապատասխանում է ուսումնական ձեռնարկին ներկայացվող պահանջներին: Այն օգտակար կարող է լինել այն ուսանողների և դասախոսների համար, որոնք հետաքրքրված են կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսությամբ:

Որոշեցին

Որոշում 15/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մ. Զաքարյանի ‹‹Կոմպլեքս անալիզի խնդրագիրք›› ուսումնական ձեռնարկը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատումը հարցի մասին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Որոշեցին

Որոշում 15/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

02.04.2016թ.